

Ճանապարհ, ժամանակ, արագություն

Միավոր ժամանակում մարմնի անցած ճանապարհը նրա շարժման արագությունն է:

Արագությունը կարելի է չափել արագաչափի միջոցով:



Օրինակ`

Կարող ենք ասել.

Ավտոմեքենան շարժվում է ժամում 70 կմ

արագությամբ, կամ ավտոմեքենան շարժվում է 70կմ/ժ արագությամբ:

Մարմնի շարժման արագությունը հավասար է նրա անցած ճանապարհի և ծախսած ժամանակի քանորդին:

Այսինքն`

Արագություն = Ճանապարհ : ժամանակ

Մարմնի անցած ճանապարհը հավասար է նրա շարժման արագության և ճախսած ժամանակի արտադրյալին:

$$\text{Ճանապարհ} = \text{Արագություն} \cdot \text{Ժամանակ}$$

Մարմնի ճախսած ժամանակը հավասար է նրա անցած ճանապարհի և արագության քանորդին:

$$\text{Ժամանակ} = \frac{\text{Ճանապարհ}}{\text{Արագություն}}$$

Խնդիրներ.

- Գնացքը 15 ժամում միևնույն արագությամբ անցավ 1200 կմ ճանապարհ: Որքա՞ն էր գնացքի շարժման արագությունը:
- Որքա՞ն ճանապարհ կանցնի ավտոմեքենան 7 ժամում, եթե շարժվի 65 կմ/ժ արագությամբ:

- Հեծանվորդը 4 ժամում ընթացավ 20 կմ/ժ
արագությամբ: Որքա՞ն ճանապարհ նա անցավ:
- Գնացքը 2 օրում միևնույն արագությամբ անցավ
1600 կմ ճանապարհ: Առաջին օրը նա ճանապարհի
վրա ծախսեց 13 ժամ, իսկ երկրորդ օրը՝ 6 ժամ
պակաս: Որքա՞ն ճանապարհ նա անցավ առաջին
օրը:
- Հայկենց տնից մինչև դպրոց 320 մ է: Նա դպրոց է
գնացել 40 մ/ր արագությամբ: Որքա՞ն ժամանակ նա
ծախսեց դպրոց գնալու համար:
- Երևանից միևնույն ուղղությամբ դուրս եկան երկու
ավտոմեքենա: 3 ժամ հետո որքա՞ն կլինի նրանց
միջև եղած հեռավորությունը, եթե առաջին
ավտոմեքենան ժամում անցնում է 70 կմ, իսկ
երկրորդը՝ 60 կմ:

- Մոտոցիկլավարը 200կմ ճանապարհի առաջին 80կմ-ն անցավ 40կմ/ժ արագությամբ, իսկ մնացած մասը՝ 60կմ/ժ արագությամբ: Մոտոցիկլավարը քանի՞ ժամում անցավ այդ ճանապարհը: